Տանձավեր

Բնակչություն՝ 172

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 35 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1600 մ,
Կարգավիճակը՝ սահմանամերձ,

Տանձավերը Սյունիք աշխարհի Քաշունիք գավառի գյուղերից էր, հիշատակվում է Ստ.Օրբելյանի կողմից: Գյուղի բնակիչները ազգամիջյան ընդհարումների և պարբերաբար կրկնվող ավազակային հարձակումների պատճառով լքում են գյուղը և 1890-ականներին այն գրեթե դատարկվում է: Գյուղի վերաբնակեցումը սկսվում է 1930-ականներին: 1930թ-ին Շրվենանցից 16 ընտանիքներ, իսկ Զանգեզուրի 1931թ. երկրաշարժից հետո՝ Լեռնաձորից ևս 16 ընտանիքներ բնակություն են հաստատում Տանձավերում: Տանձավերի տարածքում կան «Մաճ» և «Տանձավեր» կոչվող գյուղատեղիները (5-6դդ.), դամբարանադաշտեր, հին գերեզմանոցներ, եկեղեցու ավերակներ: Գյուղում պահպանվել է 1705թ-ին կառուցված Սբ.Հռիփսիմե եկեղեցին:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 1678 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 387 հա, որից՝
- վարելահող՝ 110 հա, խոտհարք՝ 42 հա, արոտ՝ 85 հա, այլ հողատեսք՝150հա
- բնակավայրերի հողեր՝ 26 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 3 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝2 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 12 հա,
- անտառային հողեր՝ 1243 հա, որից անտառածածկ՝ 1075 հա
- ջրային հողեր՝ 4 հա: